Ապա ասաց՝ մեզնից հրաման է, քանի ես այստեղ եմ, զանգահարություն ու կոչնահարություն չպետք է լինի և ոչ էլ այլ որևէ ձայն: Այն գիշեր մի ոմն ջուղայեցի գալիս է պարսպի դուռը ծեծում է, որ գնա աղոթելու: Իսկ պիղծ խանը բարկացած ասում է. «Ես չասացի, որևէ բան չպետք է ծեծվի, իսկ դուք ահա ծեծեցիք, դառնաքուն արիք»: Եվ բռնեց մարդուն երեք թուման տուգանք առավ: Մյուս օրը ելավ շրջում էր վանքի խոհանոցում, Զաքարիա վարդապետը նրա հետ էր, սա նրան հայտնում էր ծախքերի շատությունը, մուտքի քչությունը: Ման գալիս նա տեսավ մի մեծ կաթսա, աչքը բռնեց, կամեցավ այն վերցնել, սակայն նույն ժամանակ ոչինչ չասաց: Բայց երբ Երևան գնաց, մարդ ուղարկեց Սուրբ Էջմիածին, և կաթսան տարան. կաթսան բաղնիքի համար ջուր տաքացնելու աման արեց: Զաքարիա վարդապետը Օհանավանքում իր տանն էր, նրան հայտնեցին կաթսայի տանելու մասին: Նա ելավ գնաց բերդը և խանի դռանը բարձր ձայնով գոչում էր, թե Արարատյան այս երկիրը ավերեցիր, այժմ էլ ձեռք ես մեկնել վանքերին, կամենում ես դրանք էլ քանդել: Արդ՝ առնելով վանքերի բոլոր միաբաններին, կգնանք շահի ոտքը: Իսկ եթե դու ինձ սպանես, երկու հարյուր Զաքարիա կա, նրանց չես կարող սպանել: Այս բաները այսպես գոռում էր բարձր աղմուկով: Խանը նրա ձայնը լսելով, ասաց՝ ահա մեզ խայտառակ արեց. արդ՝ տվեք պղնձի գինը: Եվ վեց թուման լցրին թաշկինակի մեջ, տարան, տվին վարդապետին:

Այս ոխը (խանը) պահեց սրտում, կամենում էր ինչ-որ պատրվակով որսալ վարդապետին, բայց չկարողացավ, քանզի մեծամեծ մահմեդականները վարդապետին բարեկամ էին: Նաև Թիֆլիսի Ռոստոմ խանը եղբայրացել էր նրա հետ և միշտ նրան ընծա էր ուղարկում և նամակ էր գրում խանին՝ թե այդ իմ եղբայրը (Զաքարիան) հանձնարարվում է քեզ: Այս պատճառով ոչինչ չէր կարող անել:

Բայց ինչ-որ ձևով կամեցավ թակարդը գցել: Քանզի Փիլիպոս կաթողիկոսը Սուրբ Էջմիածնի զանգակատունն էր կառուցում, իսկ Զաքարիա վարդապետը նորոգում էր Օհանավանքի եկեղեցիները: Իսկ պիղծ խանը երբեմն պատգամներ էր ուղարկում, թե ո՞ւմ հրամանով եք շինում եկեղեցիները, երբեմն արհեստավորներին տանում էր իր գործին: Այս պատրվակներով կամենում էր մեր տիրոջը որոգայթի մեջ գցել, բայց ինքը ընկավ իր փորած փոսը:

Քանզի շահի կողմից նշանակված էր հարկահան մի իշխան, որի անունն էր Միրզա Իբրահիմ: Սա եկել խանից պահանջում էր արքունի հարկը, իսկ խանը հակառակվում, չէր տալիս: Սրանց միջև անասելի կռիվ էր գնում: Մի օր, երբ ասում ու լսում էին, խանը բարկացավ, հրամայեց զորականներին Միրզա Իբրահիմին գցել ջրավազանը և սաստիկ ծեծել: Ապա հանելով ջրից՝ արտաքսեցին Արարատյան երկրից: Նա գնաց շահի մոտ, գանգատվեց խանից և պատմեց Երևան երկրի տառապանքները, Հովհաննես եպիսկոպոսի մորուքի փետումը, որ առաջիկայում պատմելու եմ: Ամենից հետո պատմեց նախ իր նախատինքների մասին: Շահը լսելով բարկացավ, նույն Միրզա Իբրահիմին հրամայեց գնալ, կապել խանին, շղթա դնել ոտքերը, կունդ՝ պարանոցը, նրա ամեն ինչը ավերել, իսկ իրեն ուղարկել Անուշ բերդը, որը իրենք (պարսիկները) Ղայխա-ղալա են կոչում:

Այս հրամանը առած Միրզա Իբրահիմը՝ վերցնում է իր հետ իրեն հավատարիմներ և շտապում, հասնում է Երևան: Մտան բերդը և փակեցին քաղաքի դռները: Խանը դատ էր անում: Միրզա Իբրահիմը ընկերների հետ միասին եկան, հանդերձի օձիքը բռնեցին և աթոռից քաշեցին, գցին ցած, ոտնատակ անելով ծեծում էին և ասում՝ մորուք ես փետում, ահա ընդունիր փոխարինության պատիվը: Շղթա դրին ոտքերը, կունդ գցին պարանոցը և գցին ինչ-որ տուն: Երեք օրից հետո կունդը հանին պարանոցից, ոչ ոքի չթողին մտնել նրա մոտ, բացի մի պատանուց, որ նրան հաց էր տանում, չթողեցին գլուխը հարդարել: Երբ մազերը աճեցին, տեսան, որ մազերը սպիտակում են: Օրեր հետո նրան ուղարկեցին պայմանավորված տեղը՝ Անուշ կոչված բերդը. այնտեղ մնաց և այնտեղ մեռավ:

ԳԼՈՒԽ ԻԹ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ

Ինչպես խոստացանք Հովհաննես եպիսկոպոսի պատմությունը անել, ամենը կգրենք: Քանզի դևերի դեմ Լիմ անապատում պատերազմելուց և հաղթելուց հետո նա եկավ Սուրբ Էջմիածին: Փիլիպոս կաթողիկոսը նրան եպիսկոպոս ձեռնադրեց և ուղարկեց Օհանա-